



**ՍԱՏԹԵՈՍԻ ԻԳ. 13–32 (ՎԱՅԵՐ) ՀԱՍԱՐՆԵՐԻ
ՄԵԿՆՈՂԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ¹**

1. «Վայ պատգամներ»-ի (դատապարտությունների) աստվածաշնչյան համատեքստը եւ դրանց բողոքական իմաստները:

«Վայ պատգամներ» արտահայտությունը գրական ժանր է: Այն որոշ հաճախականությամբ հանդիպում է ինչպես Հին, այնպես էլ Նոր Կտակարաններում: Այս արտահայտությունը ծանոթ է ողջ Հին Մերձավոր Արեւելքում եւ Երկրորդ Տաճարի ժամանակաշրջանի հրեական գրականության մեջ: Աստված նախընտրում է օգտագործել իսրայելացիների մեջ արդեն իսկ գործածվող բառերն ու ձևերը՝ որպես հարմար միջոց՝ փոխանցելու ճշմարիտ ուղերձ, որը հեշտությամբ կարող է հասկանալի լինել որոշակի մշակույթ ունեցող մարդկանց կողմից եւ որը ճանաչված է պատմական որոշակի շրջանակում:

Պատմական շրջանակը եւ գրական շարակարգը երկու կենսական ոլորտներ են բառի ուսումնասիրության, վերլուծության համար: Բառի մանրակրկիտ ուսումնասիրությունը որոշում է բառի գործածումը տվյալ շարակարգում մեկնաբանության համար²: Այսպիսով, այս բաժինը նպատակ ունի ուսումնասիրել «վայ- պատգամ» արտահայտության աստվածաշնչյան իմաստն իր շարակարգում: Արտահայտության քննությունը կկատարվի Հին եւ Նոր Կտակարանների, Յոթանասնից (LXX) եւ Երկրորդ տաճարային պարականոն գրականության տարբեր տեսանկյուններից՝ մանրակրկիտ վերլուծություն կատարելով:

¹ Ստացվել է՝ 4.04.2025, գրախոսվել է՝ 5.05.2025: էլ. հասցե՝ alberet@yandex.ru

² Տես ավելին ANDREAS J. KÖSTENBERGER, BENJAMIN L. MERKLE, AND ROBERT L. PLUMMER, *Going Deeper with New Testament Greek. An intermediate study of the grammar and Syntax of the New Testament*, Nashville, TN, B&H Academic, 2016, էջ 475–490:

Աստծու խոսքն արտահայտելու մարգարեների նախընտրած եղանակը պատգամն է: Պատգամը աստվածային խոսքն է: «Աստծու պատգամները» հանդիսանում են (τα λωγια του Θεου) որպես «Աստծու խոսք, հայտարարություն կամ վճիռ»³: Պատգամը բացառապես վերաբերում է ինչպես Աստծուն տրված հարցի պատասխաններին, այնպես էլ Աստծու կողմից արված հայտարարություններին՝ առանց Նրան հարցնելու: Ինչ-որ իմաստով պատգամները մարգարեություններ են, քանի որ դրանք հաճախ վերաբերում են ապագային, բայց պատգամները երբեմն առնչվում են ներկայում կայացված որոշումներին: Սովորաբար Աստվածաշնչում հաղորդակցությունը Յահվեից է՝ Իսրայելի Աստծուց: Այնուամենայնիվ, կռապաշտության ժամանակ իսրայելացիները կեղծ աստվածներից փնտրում են որեւէ խոսք կամ արտահայտություն (Օվսե Դ. 12) ինչպես նաև Իսրայելի հարեւանները: Թեեւ Հին Կտակարանում «պատգամ» բառը շատ հաճախ չի օգտագործվում, բայց այդ ժամանակաշրջանում պատգամները տարածված էին: Այս տարբերությունն այն է, որ եբրայեցերեն բառը թարգմանվում է «պատգամ», բայց կարող է թարգմանվել նաև որպես «խոսքի էություն» եւ «բառ»: «Պատգամ» բառը Հին Կտակարանում հանդիպում է 135 անգամ⁴: Եբրայերեն «դաբար» նաև նշանակում է «խոսք կամ բառ», թարգմանությունը գտնվում է Բ. Թագ. ԺԶ. 23-ում: «Պատգամ» բառը սովորաբար փոխանցում է Աստծու հայտնության ուղերձը: Հին Կտակարանում «պատգամի» մյուս տասնվեց թարգմանությունները հաստատում են, որ թարգմանիչները եբրայեցերեն «դբիր» բառը թարգմանում են որպես «պատգամ»: Սա անհասկանալի բառ է, որը նշանակում է «հետ, հետեւի մաս, ամենահետին սենյակ/պալատ»⁵: Եբրայեցերեն «դբիր» բառը շատ հատուկ բառ է Հին Կտակարանի ժամանակաշրջանում⁶: «Պատգամ» (հուն.՝ լոգիոն – λογιον) բառը հանդիպում է

³ Տե՛ս ավելին WALTER BAUER, A Greek-English lexicon of the New Testament and other early christian literature, editor Frederick W. Danker, 3rd edition, Chicago, The university of Chicago press, 2000, p. 601, 616. Hereafter it is referred as (BDAG):

⁴ Համաբարբառ գրաբար Աստվածաշնչի, Հայաստանի Աստվածաշնչային ընկերություն, Երեւան, 2012 թ., էջ 1510:

⁵ Տե՛ս FRANCIS BROWN, EDWARD ROBINSON, S. R. DRIVER, AND CHARLES A. BRIGGS, The New Brown-Driver-Briggs- Gesenius Hebrew-English lexicon, Peabody, Hendrickson Publishers, 1979, էջ 182:

⁶ Եբրայերեն «դբիր» բառն առաջին անգամ հայտնվում է Գ. Թագ. Զ 5-ում, որտեղ Աստված նկարագրում է Սողոմոնի տաճարը: Գ. Թագ. Զ. 16-ը հստակ բացատրում է, որ «դբիր» բառը վերաբերում է «Սրբություն Սրբոցին», զուգահեռաբար դբիրին կամ «պատգամին»՝

երեսունհինգ անգամ Յոթանասնիցում (LXX) եւ չորս անգամ (միայն հոգնակի ձեւով) Նոր Կտակարանում (Գործք առաքելոց է. 38, Հռոմ. Գ. 2, Ա. Պետր. Գ. 11, Ա. Հովհ. Ա. 5)⁷: Կարող ենք ասել, որ «վայ» բառի երկու լայն իմաստ կա: Առաջին իմաստը ձայնարկություն/բացականչություն է, որը արտահայտում է ցավ կամ դժգոհություն, ինչպես օրինակ՝ «վայ՛» եւ «ավայ՛»⁸: Երկրորդ իմաստը սաստիկ դժվարության կամ անհանգստության վիճակ է արտահայտում: «Վայ» բառը հիմնականում սահմանվում է որպես նմանաձայնական բացականչություն: Հին Կտակարանում այն հաճախ օգտագործվում է որպես ողբ զգացմունքների պոռթկում ցուցաբերելու նպատակով: Այն հիմնականում հանդիպում է մարգարեական ճառերում, ազդարարում է մոտալուտ վախճանը: Նոր Կտակարանում «վայ»-ը գործում է որպես մարգարեական դատապարտում (Հուդա 11) կամ ողբ (Մատթ. ԻԳ. 37–39)⁹: Վայերը հիմնականում հայտնվում են համատես Ավետարաններում, բայց առավել շատ հանդիպում են Մատթեոսի Ավետարանում: Մատթեոսի «վայ» բացականչություններ կան ԺԸ. 7, ԻԳ. հատվածներում:

Լոունը եւ Նիդան դասակարգում են օձա՛-ը «անհանգստություն, փորձություն, զրկանք, սիտիանք, բարյացակամ հանգամանքներ» իմաստալին տիրույթում: Նրանք օձա՛- ով արտահայտում են անմիջական դժվարության կամ նեղության վիճակ՝ «աղետ, սարսափ»: Որոշ լեզուներ կարող են շունենալ «աղետ» գոյականը, սակայն հունարեն օձա՛ բառի իմաստը կարող է արտահայտվել որպես «որքան շատ կտուժի» կամ «ինչ սարսափելի ցավ կպատահի»¹⁰: Բացի այդ՝ Հագները սահմանում է «վայ խոսքը»՝ որպես «դժգոհության ցավալի հայտարարություն, որը ներառում է են-

բացատրելով, թե ինչ է իրենից ներկայացնում պատգամը: Պատգամը, որի մասին Աստված խոսում է այստեղ, ոչ այլ ինչ է, քան Ամենասուրբ վայրը՝ ներքին սենյակը, որտեղ գտնվում էր Ուխտի Տապանակը: Ուրիշ թարգմանիչներ դեբիրը թարգմանում են որպես «Սուրբ վայր», «սրբավայր», «ներքին տուն», «հետնասենյակ», «հանգիստ» եւ «ներքին սրբավայր»:

⁷ Տե՛ս DARRELL L. Bock, editor, The Bible Knowledge Word Study, Acts-Ephesians, Colorado Springs, Cook Communications Ministries, 2006, էջ 142:

⁸ Տե՛ս ավելին WESLEY G. OLMSTEAD, Matthew 15–28, A Handbook on the Greek Text, Waco, Baylor University Press, 2019, էջ 217:

⁹ Տե՛ս KENNETH J. ARCHER, «Woe», Eerdmans Dictionary of the Bible, ed. David Noel Freedman, Grand Rapids, William B. Eerdmans Publishing Company, 2000, էջ 1385:

¹⁰ Տե՛ս JOHANNES P. LOUW AND EUGENE A. NIDA, Greek-English Lexicon of the New Testament Based on Semantic Domains, ed. Rondal B. Smith and Karen A. Munson, New York, Unite Bible Societies, volume 1, 1988, էջ 243:

թաղրյալ դատաստանը»: Հագների տեսակետը իրավացիորեն պատկերում է Հիսուսին որպես Աստծու դատաստանի գործակալ: Յոթ վայերի մասին Հիսուսի հայտարարությունը ոչ միայն սոսկ բանավոր հարձակում է նրանց վրա, ովքեր համաձայն չեն իր հետ, այլ նա պաշտոնապես դատում է հրեա կրոնական առաջնորդներին, ինչը ենթադրում է, որ ինքն ունի աշխարհը դատելու իշխանությունը¹¹:

2. Վայերը Յոթանասնից թարգմանության մեջ (LXX)

Եւ Երկրորդ տանաբային գրականություն մեջ

LXX-ում «վայ»-ը հիմնականում թարգմանվում են օտա-ի՝ տրական հոլովով: Սա նաեւ այն բառն է, որն օգտագործվում է Մատթեոս ԻԳ.-ում, երբ Հիսուսը դատապարտում է յոթ վայերով Իսրայելի հոգեւոր-կրոնական առաջնորդներին: Հազվադեպ հանդիպում է նաեւ օտա թարգմանությունը գոյական ձեւով (ուղղական հոլովով): Օտա բառն ուժեղ հույզեր, հատկապես ցավ կամ զայրույթ արտահայտող նմանաձայնական բացականչություն է: Օտա-ն հայտնվում է վաթսունինը անգամ¹² եւ կանոնավոր կերպով ներկայացնում է եբրայեցերեն՝ «վայ», որ ծագում է «ոռնալ, ողբալ» բառերից: Ավելին, օտա բացականչությունը բացառապես հաստատված է Յոթանասնիցում, որտեղ այն հանդիպում է մտավորապես վաթսունհինգ անգամ, ընդ որում՝ դեպքերի մեկ երրորդը հայտնաբերվել է Եսայու մարգարեության մեջ՝ (քսաներկու անգամ)¹³: Եբրայեցերեն «վայ» բառը պարբերաբար օգտագործվում է տարբեր շարակարգերում՝ ցավ կամ զայրույթ (Եր. Ժ. 19), վիշտ (Առակ. ԻԳ. 29), հուսահատություն (Ա. Թագ. Դ. 7-8), ողբ (Գ. Թագ. ԺԳ. 30), դժգոհություն (Ես. Ա. 4), սպառնալիք արտահայտելու համար (Եզեկ. ԺԶ. 23)¹⁴:

¹¹ Տե՛ս N. T. WRIGHT, *The New Testament and the People of God*, London, Society for Promoting Christian Knowledge, 1992, էջ 387: Նկատի ունեցե՛ք ակնհայտ հակադրությունը Մատթ. Ե.-ի երանինների հետ, եւ միասին զուգահեռը Բ. Օր. Իէ.-ի. գլուխներում ուխտի օրհնությունների եւ անեծքների ցանկի հետ:

¹² Տե՛ս ALISTAIR I. WILSON, *When Will These Things Happen? A Study of Jesus as Judge in Matthew 21-25*, Waynesboro, VA, Paternoster, 2004, էջ 102:

¹³ Տե՛ս MOISÉS SILVA, *New International Dictionary of New Testament Theology and Exegesis*, Grand Rapids, Zondervan, 2014, volume 3, էջ 561, տե՛ս նաև Colin Brown, ed., *The New International Dictionary of New Testament Theology* Grand Rapids, Zondervan Corporation, volume 3, 1978, էջ 1051:

¹⁴ Տե՛ս COLIN BROWN, *The New International Dictionary of New Testament theology*, էջ 1051:

Վայ պատգամները լայնորեն հանդիպում են Երկրորդ Տաճարի ժամանակաշրջանի հրեական գրականության մեջ: Դրանցից մի քանիսը գտնվում են ապոկրիֆներում, որոնք ներառում են Յուդիթ ԺԶ. 17, Սիրաք Բ. 14–16, ԽԱ. 11, Եւ Ա. Մակ. Բ. 7: Բացի այդ՝ վայ պատգամները հայտնվում են նաև հրեական կեղծ գրություններում, ինչպիսիք են 1-ին և 2-րդ Ենովքը: 1-ին Ենովքը, մասնավորապես, բաղկացած է վայերի շորս շարքից: 2-րդ Ենովքը, հատկապես ԺԳ. 64–70, բաղկացած է յոթ զույգ օրհնությունների և անեծքների շարքից (տես Դուկ. Զ. 20–26): «Տառապանք կամ երկունք» գաղափարը տարածված է հրեական գրականության մեջ, մասնավորապես՝ հայտնութենական գրականությունում: Այս գաղափարը կարելի է գտնել նաև Դանիելի մարգարեությունում (Է., Թ. 20–27, ԺԲ. 1–4), 1 Ենովք, 4 Եզրաս (4 Եզրաս Ե. 1–13, Զ. 17–28, Է. 10–35)-ում, Մովսեսի Կտակարանում (Ը., Ժ. 110), Քումրանի գալարներում և ռաբբիական գրականության մեջ¹⁵: Քումրանյան գրականությունը ցույց է տալիս նշանակալից վայ պատգամներ, որոնցից որոշները Երուսաղեմի և նրա առաջնորդների դեմ էին ուղղված: Ամբակում Բ. 12, 15-ի վայ պատգամը և այն մեկնաբանում է որպես Երուսաղեմի շար քահանայի հիշատակում, որը հակառակվել է «արդարության ուսուցչին»:

3. Վայերի գործածումը Հին և նոր Կտակարաններում

Հին Կտակարանը ներառում է մի շարք վայ պատգամներ: Վեստերմանը իրավացիորեն դասակարգում է վայ պատգամները որպես դատաստանի պատգամի ենթատեսակ, և նա ոչ միայն նշում է վայ ներածական աղաղակը, այլև վայը՝ որպես մեղադրանք, որը հետևում է ողբ բառին, դատաստանի հայտարարություն¹⁶: Ըստ Հոյթի, Հին Կտակարանում վայ պատգամների կառուցվածքային վերլուծությունը բացահայտում է երեք տարբեր բաժիններ.

Նախ՝ ողբի բաժինը: Այս բաժնում վայ պատգամները պարունակում են վայի սկզբնական աղաղակ, ճիշ և նկարագրում են մարդկանց ողբալի վիճակը և նրանց մեղավոր արարքները:

¹⁵ Տես RALPH P. MARTIN AND PETER H. DAVIDS, ed., Dictionary of the Later New Testament Its Developments, Westmont, Illinois, InterVarsity Press, 1997, էջ 1180:

¹⁶ Տես ավելին CLAUS WESTERMANN, Basic Forms of Prophetic Speech, 1967, repr., Westminster John Knox Press, Louisville, 1991, էջ 190–194:

Երկրորդ՝ հորդորական բաժինը: Վայ պատգամները կարող են պարունակել բողոքի կամ գանգատի բաժին: Վերջինս հիմնված է հրամայական դատողության վրա (հրամայականներ եւ արդարացումներ), որը խրախուսում է ուկնդիրներին փոխել իրենց գործողությունները եւ արձագանքել իրենց մեջ եղած մեղքին՝ նախքան դատաստանի գալը:

Երրորդ՝ դատաստանի բաժինը: Վայ պատգամները արտահայտում են նաև դատաստանի իմաստ՝ ցույց տալով դատաստանի անխուսափելի կողմը¹⁷:

Վայ պատգամներն ունեն խորը տրտմության աղաղակ (Գ. Թագ. ԺԳ. 30, Երեմ. ԻԲ. 18), մինչև խղճահարուստության արտահայտություն մինչև անհարգալից անեծք, որն ըստ էության նշանակում է ծայրահեղ թշնամանք (Ես. ԼԳ. 1): Բացի այդ՝ վայ պատգամները բաղկացած են զայրույթի, վշտի եւ տագնապի խառնուրդից, որ կարող է Իսրայելի վրա գալ իր մեղքի պատճառով: Վայ պատգամները զարգացել են դատաստանի մարգարեական հայտարարություններից, ուխտի անեծքներից (Բ. Օրին. ԻԷ. 15) կամ նույնիսկ թաղման ողբից (Երեմ. ԻԲ. 18)¹⁸: Մարգարեի վերաբերմունքը վայ պատգամներում սոսկ զայրույթից չէ: Նման պատգամները կարող են արտահայտել նաև անեծք, նաև ողբ, ընդ որում հետնախորքը որոշիչ է ճշգրիտ մեկնաբանության հստակ նրբերանգի հարցում¹⁹: Քանի որ «երանին» դասակարգվում է որպես իմաստության վերաբերում, «վայ»-ը մարգարեական վերաբերում է: Կարճ ասած՝ դա երանության հակառակն է: Հին Կտակարանի վայ պատգամներից շատերը ազդարարում են մարդկանց համար հորիզոնում սպասվող կործանման մասին: Գալիք աղետն ականհայտորեն ենթադրվում է վայի մեջ: Հին Կտակարանի մարգարեները գնալով դառնում են ավելի դաժան, խայթող են դառնում մարդկանց հոգեւոր համառության վերաբերյալ իրենց մեղադրանքներում (Չաք. ԺԱ. 17): Այսպիսով՝ այս վայերը միայն մոտալուտ աղետի մասին չեն նախազգուշացում. դրանք, իրոք, ծառայում են որպես ազդարարում, որ Աստծու վրեժխնդրությունը կիրականանա²⁰:

¹⁷ *Տե՛ս* JOANNA M. HOYT, *Discourse Analysis of Prophetic Oracles*, published by National Association of professors of Hebrew Studies, 2019, էջ 158–160:

¹⁸ *Տե՛ս ավելին* R. CLEMENTS AND R. COLLINS, *Woe, The Anchor Bible Dictionary*, New York, Doubleday, 1992, էջ 945–946:

¹⁹ *Տե՛ս ավելին* DAVID E. GARLAND, *The Intention of Matthew 23, Supplements to Novum Testamentum* 52, Leiden, Brill, 1979, էջ 64–68:

²⁰ *Տե՛ս* JOEL B. GREEN, SCOT MCKNIGHT, and I. HOWARD MARSHALL, *Dictionary of Jesus and the Gospels*, InterVarsity Press, Downers grove, Illinois, Leicester, England, 1992, էջ 80:

Հին Կտակարանի մարգարեները վա՛յ են ասում Իսրայելի պաշտոնյա առաջնորդների դեմ՝ նրանց ամբարտավանության համար՝ չկատարելու իրենց ուխտի պարտականությունները Իսրայելի հանդեպ կռապաշտության եւ ընկերային անարդարության միջոցով: Եսայի Ե.-ի վեց վայերը (Ե. 8, 11, 18, 20, 21, 22) կենտրոնացած են Երուսաղեմի եւ Հուդայի վրա (Ես. Ե. 3, 7, 17): Եսայիի վայը Սամարիայի դեմ (Ես. ԻԸ. 1–6) դատաստանի է վերածվում քահանայի եւ մարգարեի եւ Երուսաղեմում իշխողների վրա (Ես. ԻԸ. 14): Բացի այդ՝ Եսայի ԻԹ. գլուխը դատապարտում է Երուսաղեմը (Արիել քաղաքը) իր իսկական ակնածանքի բացակայության համար (Ես. ԻԹ. 13–14), նույնիսկ եթե նրա կրոնական արարողությունները շարունակվում են ըստ ժամանակացույցի (Ես. ԻԹ. 1): Եսայի Լ. եւ ԼԱ. գլուխները հայտարարում են Եգիպտոսի հետ դաշինքի կործանումը (Ես. Լ. 1–4, 7, ԼԱ. 1):

Երեմիա Դ. եւ Զ. գլուխներում Երուսաղեմին երեք վայեր են ուղղված (Եր. Դ. 13, ԼԱ., Զ. 4), երբ դատաստանը մոտենում է թագավորի, իշխանների, մարգարեների եւ քահանաների մեղքերի պատճառով (Եր. Դ. 9, Ե. 13, 30–31, Զ. 13): Այս մեղքերը ներառում են Աստծու ուխտի արհամարհանքը (Դ. 22, Ե. 1–5, 21): Երեմիա ԺԳ. 27-ում մասնավորապես ասվում է վայ Երուսաղեմի վրա՝ հանդիմանության համար առանձնացնելով նրա թագավորներին, քահանաներին եւ մարգարեներին (Եր. ԺԳ. 13): Երեմիա ԻԲ. 11–17 եւ ԻԲ. 18–30 համարները համապատասխանաբար դատապարտում են Սալլում եւ Հովակիմ թագավորներին: Երեմիա ԻԳ.-ում բացահայտորեն դաժան վայ է ասվում կործանարար հովիվներին (Եր. ԻԳ. 5, 11, 13–22, 25–40, տես Ժ. 21):

Եզեկիել ԺԶ. գլուխը բացահայտում է Երուսաղեմի մեղքը՝ օգտագործելով համատարած սեռական փոխաբերություններ եւ կրկնակի վայ է ասում Երուսաղեմին (Եզեկ. ԺԶ. 23): Ավելին, Եզեկիել ԻԴ. գլուխը երկու անգամ արտասանում է վայ Երուսաղեմին որպես արյունոտ եւ ապստամբ քաղաքի (Եզեկ. ԻԴ. 6, 9): Երուսաղեմի առաջնորդների դեմ զգալի վայեր կան եւ Երուսաղեմի համար հատուկ դատաստան (Միք. Ա. 5, Բ. 1, 9, 12, Բ. 7, 12, Գ. 1, 5, 9–11): Ամբակում Բ. գլխի հինգ վայերը դատապարտում են Իսրայելի առաջնորդների մեղքերը (Ամբ. Բ. 6, 9, 12, 15, 19): Սոփոնիան արտասանում է այն վայը, որն ուղղված է Երուսաղեմի ապականված իշխաններին, դատավորներին, մարգարեներին եւ քահանաներին (Սոփ. Գ. 1–7):

Հունարեն «վայ» բառը օտաձև է: Այն «վայ»-ի ամենատարածված թարգմանությունն է Յոթանասնիցում (LXX) (69) անգամ: Օտաձև բառը չորս Ավետարաններում արձանագրություններում օգտագործվում է ընդհանուր առմամբ քսանյոթ անգամ: Հիսուսը, ամենայն հավանականությամբ, խոսում էր արամերեն՝ երկրի վրա եղած ժամանակ, եւ, հետեւաբար, օգտագործած կլիներ «վայ» բառը²¹: Այն փաստը, որ Նոր Կտակարանում օտաձև կիրառման շրջանակը զուգահեռ է Հին Կտակարանում «վայ»-ի շրջանակին, կարծես թե հաստատում է այս գաղափարը: Հիսուս հունարեն օտաձև բառն օգտագործում է որպես նախազուշացում եւ ողբ ընդհանրապես մարդկության համար Դուկաս ԺԷ. 1-ում: Մատթեոս ԻԳ. 19-ում (հմմտ. Մարկ. ԺԳ. 17, Դուկ. ԻԱ. 23) Հիսուսը խղճահարություն, խոր կարեկցանք եւ վիշտ է հայտնում նրանց համար, որոնց խանգարեցին կործանված Երուսաղեմ քաղաքից փախչելու իրենց փորձերում:

Հիսուսի վայը Հուդայի ճակատագրի վրա (Մատթ. ԻԶ. 24, Մարկ. ԺԳ. 21, Դուկ. ԻԲ. 22) արտահայտում է խղճահարություն եւ սուր վիշտ²²:

Ընդհանուր առմամբ՝ Նոր Կտակարանում «վայ» բառը, ըստ սկզբնաղբյուրների տեսության, ավետարանի հեղինակը վերցրել է «Q»²³ աղբյուրից²⁴: Օտաձև պատգամները քառասուն անգամ հայտնվում են Նոր Կտակարանում, երեսուն անգամ՝ համատեսներում, մեկ անգամ՝ Պողոսի տողերում (Ա. Կորնթ. Թ. 16), մեկ անգամ՝ Հուդայի (Հուդա 11) եւ տասնչորս անգամ՝ Հայտնություն մեջ (Հայտ. Ը. 13, Թ. 12, ԺԱ. 14, ԺԲ. 12, ԺԸ. 10, 16, 19): Օտաձև բառը, բացի չորս առանձին դեպքերից (Մարկ. ԺԳ. 17, ԺԳ. 21, Ա. Կորնթ. Թ. 16, Հուդա 11), հանդիպում է Մատթեոսի, Դուկասի ավետարաններում եւ Հայտնության մեջ (յուրաքանչյուրը տասներեքից տասնհինգ անգամ)²⁵: Օտաձև բառը աստվածաբանական նշանակություն

²¹ Հմմտ. There is no denying that Jesus spoke Aramaic. the transliterated words attributed to Him in the New Testament are Aramaic. More information sees STEVEN E. FASSBERG, "Which Semitic Language Did Jesus and Other Contemporary Jews Speak?", The Catholic Biblical Quarterly 74, no. 2, 2012, էջ 280:

²² Տե՛ս COLIN BROWN, The New International Dictionary of New Testament Theology, էջ 1053:

²³ Quelle՝ աղբյուր բառից: Համատես ավետարանների սկզբնաղբյուրների մասին տե՛ս ավելին ՍԻՓԱՆ ՔԱՀԱՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ, Նոր Կտակարանի ներածություն, Սբ. էջմիածին, 2021 թ., էջ 166–168:

²⁴ Տե՛ս նաեւ Մատթ. ԺԱ. 21, ԺԸ. 7, ԻԳ. 13, 15, 16, 23, 25, 27, 29, ԻԳ. 19, ԻԶ. 24, Ա. Կորնթ. Թ. 16, Հուդա 11, Հայտ. Ը. 13, Թ. 12, ԺԱ. 14, ԺԲ. 12, ԺԸ. 10, 16, 19:

²⁵ Տե՛ս ավելին DAVID L. TURNER, Israel's Last Prophet, Jesus and the Jewish Leaders in Matthew 23, Minneapolis, MN, Fortress Press, 2015, p. 278, MOISÉS SILVA, New International Dictionary of New

չունի, սակայն այն ծառայում է հաղորդելու ուղերձի հանդիսավորութունը տարբեր կարեւոր շարակարգերում: Նոր Կտակարանի մի քանի հատվածներ, կարծես, ավելի արտահայտում են կարեկից վիշտ, քան՝ զայրացած դատապարտում: Այս հատվածներից մեկը Ղուկ. Զ. 24–26-ն է: Եւ իսկապես, Ղուկաս Զ. 24–26-ը ներառում է չորս վայ (համապատասխանում է Զ. 20–23-ի երանիներին), որոնք բացահայտորեն նախազգուշացումներ են պարունակում նրանց համար, ովքեր չեն հետեւում Հիսուսին: Կրկնվող օձա՛ն արտահայտում է Հիսուսի տխրությունը այն բանի համար, որ Նա գիտի, որ դա անխուսափելի վերջն է յուրաքանչյուրի համար, որ կուրորեն շարունակում է ինքնաբավութունը²⁶:

Ղուկաս Զ. 20–28-ը պարունակում է չորս երանիների մի շարք, որոնք հավասարակշռված են չորս օձա՛նով (անուղղակի «վայ» դատապարտումներով)²⁷: Հիսուս ասում է այս չորս վայերը՝ զգուշացնելու նրանց, ովքեր չեն հետեւի իրեն: Օձա՛նի կրկնությունը, կարծես, արտահայտում է Հիսուսի մեծ տխրությունը այն մարդկանց վախճանի համար, ովքեր հետեւում են իրենց սեփական ճանապարհներին²⁸: Հետաքրքիր է, որ երանիների եւ վայերի շարքի հավասարակշռումը, կարծես, նույնացնում է Ղուկաս Զ. 20–28-ը՝ որպես իմաստության շարակարգ: Ավետարաններում օձա՛նը կարող է հստակորեն ներկայացվել որպես վշտի եւ խղճահարության արտահայտություն: Որոշ մեկնաբաններ առաջարկում են օձա՛նի երեք հայեցակարգային տեսակետ՝ զրկանք, դատաստան եւ ողբ²⁹: Տարբեր վայ պատգամները ծառայում են մեկից ավելի տեսակետների կամ ենթադրում են մեկից ավելի իմաստներ: Հիսուսի արտասանած «վայ» բառի էական նշանակությունը կարող է լինել ողբ կամ նախազգուշացում, կամ երկունս էլ: Օրինակ՝ Հիսուսը վայ է ասում աշխարհին մեղքի գայթակղությունների անխուսափելիության պատճառով (Մատթ. ԺԼ. 7), եւ սա ըստ էության ողբ է, ինչպես նաեւ նախազգուշացում: Բոլորովին այլ բան է, որ մեկը մյուսին գայթակղեցնում է. այս վայը ծառայում է որպես խիստ նախազգուշացում: Նրանք,

Testament Theology and Exegesis, volume 3, Zondervan, 2014, էջ 561:

²⁶ *SÉU* MOISÉS SILVA, New International Dictionary of New Testament Theology and Exegesis, էջ 562:

²⁷ *SÉU* WALDEMAR JANZEN, ASRÊ in the Old Testament, The Harvard Theological Review 58, no. 2, published by Cambridge university press on behalf of the Harvard Divinity School, 1965, էջ 220:

²⁸ *SÉU* COLIN BROWN, The New International Dictionary of New Testament Theology, էջ 1053:

²⁹ *SÉU* MOISÉS SILVA, New International Dictionary of New Testament Theology and Exegesis, էջ 562:

ովքեր ուրիշներին դեպի մեղք են տանում, գտնվում են կրակոտ գեհենի վտանգի մեջ (Մատթ. ԺԸ. 6–9): Ավելին, Հիսուսը վայ է ասում նրան, ով դավաճանում է Մարդու Որդուն (Մատթ. ԻԶ. 24, Մարկ. ԺԴ. 21, Ղուկ. ԻԲ. 22): Հուդայի համար այս առանձնահատուկ վայը, ըստ էության, խորը վշտի արտահայտություն է, ինչպես նաև խիստ նախազգուշացում նրան, որ իր դավաճանությունը կզրկի իրեն Աստծու արքայություն մտնելուց: Աստվածային բարկությունն ակնհայտորեն Հուդային ուղղված վայի մի մասնիկն է հանդիսանում: «Այդ մարդը» արտահայտությունը (Մատթ. ԻԶ. 24), որն ակնհայտորեն վերաբերում է Հուդային, հուշում է, որ Քրիստոսից բաժանվելը, փաստորեն, արդեն տեղի է ունեցել, քանի որ Հուդան իրեն դուրս է դնում Աստծու ողորմությունից³⁰: Վիշտն ու կարեկցանքն ակնհայտ են Մատթեոս ԻԴ. 19-ում (Մարկ. ԺԳ. 17, Ղուկ. ԻԱ. 23), որտեղ խորը մտահոգություն է արտահայտվում նրանց համար, ովքեր ընտանեկան պարտականությունների պատճառով չկարողացան կործանված Երուսաղեմ քաղաքից փախչել: Մեծ աղետի ժամանակ հղի կանանց ուղղված վայերը ողբում են այն իրականության համար, որ երբ աղետը գա, նրանք կկարողանան փախչել միայն դժվարությամբ (Մատթ. ԻԴ. 19, Մարկ. ԺԳ. 17, Ղուկ. ԻԱ. 23): Դատապարտումն ավելի ակնհայտ է Մատթ. ԺԱ. 21-ում (Ղուկ. ԺԱ. 13), որը փաստում է մի քանի քաղաքների (Քորազին, Բեթսաիդա եւ նույնիսկ Կափառնայում) հասցեին Հիսուսի խիստ հանդիմանությունը՝ նրանց արձագանքի բացակայության համար, երբ Նա այսքան ժամանակ գործել է նրանց մեջ³¹: Գրինը եւ Մակ Նայթը հասկանում են, որ այն վայերը, որ Հիսուս ասաց Գալիլեայի Քորազին եւ Բեթսաիդա քաղաքների դեմ, ոչ թե ողբեր են, այլ անեծքներ³²: «Վայ պատգամների» կիրառությունները կամ գործառույթները, թեև տարբեր են Հին եւ Նոր Կտակարանների միջև, երկուսն էլ ունեն որոշ ընդհանուր հատկանիշներ:

«Վայ»-ի օգտագործումը Հին Կտակարանում

Ընդհանրապես, կարելու է գիտակցել, որ Հին Կտակարանի վայերը հաճախ օգտագործվում են որպես դատապարտման եւ ոչ երբեք որպես

³⁰ Նույն տեղում, էջ 562:

³¹ Տե՛ս նույն տեղում, էջ 562:

³² Տե՛ս GREEN AND MCKNIGHT, Dictionary of Jesus and the Gospels, InterVarsity Press, Downers grove, Illinois, Leicester, England, 1992, էջ 80:

նախազգուշացման պատգամ: Այսպիսով, նախազգուշացումը պետք է տարբերակվի դատապարտումից (վայ)³³: Հին Կտակարանի մարգարեները մարդկանց ասացին, թե ինչ է սպասում նրանց, եթե Աստուծու դատաստանը կանխվի (Ամոս Ե. 16): Նախազգուշացումը երբեմն ունի դատաստանի պայմանական հայտարարության տեսք, բայց այն նաեւ այլ ձեւեր է ընդունում: Ընդհակառակը, վայը մարգարեական ճառերի խոսքերի համար կիրառվող արտահայտությունն է, որոնք հաճախ սկսվում են «վայ» աղաղակով, որին հաջորդում է հասցեատերերի նկարագրությունը եւ սովորաբար նաեւ դատաստանի հայտարարություն: Հին Կտակարանում վայը հաճախ հայտնվում է «աղետի մարգարեություն» տեսքով:

Ըստ Հեյսի՝ մարգարեական խոսքի երկու հիմնական տեսակ կա. առաջինը՝ «աղետի մարգարեությունը», որը կանխատեսում է ապագա աղետը կամ պատիժը: Երկրորդ՝ «փրկության մարգարեությունը», որը կանխատեսում է աստվածային միջամտությունը կարիքավորների (սովորաբար Իսրայելի) անունից: Վայը հանդիպում է գրեթե բացառապես «աղետի մարգարեության մեջ»³⁴: Զեւաքննադատների միջեւ զգալի հակասություններ են եղել վայերի վերաբերյալ, հիմնականում դրա օգտագործման «ծագման» շուրջ: Հին Կտակարանում վայի սկզբնական իմաստը ներառում է նախ՝ իմաստության խոսքերը, երկրորդ՝ թաղման ողբը, երրորդ՝ անեծքի բանաձեւը³⁵:

Նախ՝ իմաստության խոսքերը. Վայերի օգտագործման առաջին ծագումը իմաստության խոսքերում է: Իմաստության խոսքերի նշանակությունը կարող է կիրառվել իմաստության որոշ գրքերում: Վայ պատգամի ուսումնասիրության մեջ՝ օգտագործելով «վայ»-ը: «Վայ» բառն օգտագործվում է ընդգծելու համար անհատի հետեւանքային, բացասական վիճակը (մահ), որը խախտել է Յահվեի Օրենքի (Մովսիսական Ուխտ)

³³ Տես ալեկին JOHN H. HAYES, *Old Testament Form Criticism*, 1974, repr., San Antonio, TX, Trinity University Press, 1977, էջ 166–167, GENE M. TUCKER, *Form Criticism of the Old Testament*, 1971, repr., Philadelphia, PA, Fortress Press, 1973, էջ 66, STEVEN HORINE, *A Study of the Literary Genre of the Woe Oracle*, *Calvary Baptist theological journal*, 1989, էջ 77–78:

³⁴ Տես ալեկին JOHN H. HAYES, *Old Testament Form Criticism*, p. 159, 162–163, Steven Horine, *A Study of the Literary Genre of the Woe Oracle*, էջ 78:

³⁵ Տես ալեկին ERHARD GERSTENBERGER, *The Woe-Oracles of the Prophets*, published by The society of Biblical literature, 1962, p. 259–260, HANS WALTER WOLFF, JOEL AND AMOS, *A Commentary on the Books of the Prophets Joel and Amos*, Philadelphia, Fortress Press, 1977, էջ 244, տես ալեկին STEVEN HORINE, *A Study of the Literary Genre of the Woe Oracle*, էջ 78–93:

բարոյական դրույթները: «Վայ»-ի օգտագործումը ակնհայտորեն ներկայացնում է այն ճանապարհը, որը տանում է դեպի մահ: Մահը կամ կործանումը հիմնականում բնութագրում է վայ ստացողի մոտալուտ վիճակը: Այսպիսով, իմաստության խոսքերը եւ վայ պատգամները կապված են Մովսիսական Ուխտի օրհնության եւ անեծքի հետ (Բ. Օր. ԻԷ.-ԻԸ.)³⁶:

Երկրորդ՝ թաղման ողբը: Վայերի օգտագործման երկրորդ ծագումը թաղման ողբի ձևն է: Եբրայեցիներն «վայ» բառի ծագումը կապված է թաղման ողբի հետ: «Վայ»-ի առաջին կիրառումը թաղման ողբի օգտագործման մեջ հայտնաբերված է Ա. Թագ. ԺԳ. 29-30-ում: Հետագայում Երեմիան Դ՞-ն օգտագործում է ողբի շարակարգում աքսորից անմիջապես առաջ (Եր. ԻԲ. 18): Եբրայեցիներն «վայ» բառն օգտագործվում է որպես թաղման աղաղակ՝ սկսած ութերորդ կամ իններորդ դարից առնվազն մինչեւ աքսորը³⁷: Հետագայում այն ներառվում է Ամոսից սկսած կործանման մասին մարգարեությունների մեջ, որտեղ այն սկսում է կորցնել իր սկզբնական ուժի մի մասը՝ որպես թաղման ողբ: Դրա տարբերակիչ գործածությունը՝ որպես թաղման ողբ, ի վերջո, կորցնում է իր ամբողջ ուժը եւ ավելի ուշ դառնում է ավելի շատ վիրավորանք կամ սպառնալիք: Ողբը եւ վայ աղաղակն զգալի նմանություններ ունեն: Երկուսն էլ համայնքին հայտնում են տխուր իրադարձություն (մահ կամ դատաստան): Երկուսն էլ ունեն վատ լուրերի վերաբերյալ հուզականություն եւ երկուսն էլ ներկայացնում են ապագան, որն անշրջելի է:

Երրորդ՝ անեծքի բանաձևեր. Վայերի երրորդ օգտագործումը, որը հիմնականում հայտնվում է որպես «վայ», անեծքի բանաձևում է: Վեստերմանը դրականորեն նկատում է, որ վայերն անեծքի բանաձևի հետ շատ ընդհանուր կետեր ունեն: Նախ, դրանք գտնվում են (երբեմն) մի շարքով (Ես. Ե. 8 եւ ԻԸ. 1-33:1): Այս շարքն զգալիորեն համապատասխանում է Բ. Օրինաց ԻԷ. 15-26-ի անեծքի բանաձևի շարքին: Երկրորդ, վայն օգտագործվում է «ընկերային մեղադրանքի» առնչությամբ, եւ Բ. Օրինաց 27-ի անեծքները նույնպես վերաբերում են բացառապես համայնքի ընդհանուր կյանքին³⁸: Երրորդ, վայը եւ անեծքի բա-

³⁶ Տե՛ս ավելին ERHARD GERSTENBERGER, *The Woe-Oracles of the Prophets*, էջ 259-260:

³⁷ Տե՛ս JAMES G. WILLIAMS, *The Alas-Oracles of the Eighth Century Prophets*, Hebrew Union College Annual 38, 1967, էջ 88:

³⁸ Տե՛ս CLAUS WESTERMANN, *Basic Forms of Prophetic Speech*. Reprint, Louisville, Westminster John Knox Press 1961, էջ 193:

նաձեւը հաճախ կապված են Աստծու Օրենքի հետ, որը ամրագրված է Մովսիսական Ուխտում: Չորրորդ, անեծքի բանաձեւը եւ դատավճիռը սերտ կապվածություն ունեն: Հինգերորդ, երկուսն էլ ենթակա են Աստծու պատմական գործողություններին իր ժողովրդի վերաբերյալ: Վեցերորդ, նրանք նման են ձեւով եւ ոճով³⁹: Այնուամենայնիվ, վայերը չպետք է շփոթել անեծքի բանաձեւի հետ: Հարկ է նշել նաեւ, որ դրանք ունեն ընդհանուր որոշ տարրեր, այն է՝ ձեւը եւ որոշ շփով բովանդակությունը: Անեծքի բանաձեւի եւ վայ պատգամների միջեւ հիմնական տարբերությունն այն է, որ անեծքը (ինչպես իմաստության տեքստերը) նկարագրում է մի գործողություն, որը վարկածային է, հնարավոր, որ դեռ չի կատարվել: Մյուս կողմից, վայ պատգամը դատապարտում է մարդուն, խմբին կամ ազգին եւ նկարագրում է այն դատապարտելի գործողությունը, որն արդեն տեղի է ունեցել: Երեմիա ԺԱ. 3 եւ ԺԷ. 5 համարներում Երեմիան օգտագործում է երկու ձեւերն էլ՝ «անիծված» եւ «վայ», որոնք միմյանցից տարբերվող են նրա մարգարեական գրվածքների հիմնական մասում: Անեծքի խոսքերը «Աստծու հետ իր հարաբերությունները խախտող մարդու արտացոլումն են»⁴⁰: Այս խոսքերը նշանակալից են, քանի որ վայ պատգամներում դատապարտվածները դատապարտված են նույն հիմնական պատճառով: Եւ անեծքի բանաձեւը, եւ վայը ենթադրում են Յահվեի հետագա միջամտությունը մեղավորի դեմ: Եւ իմաստությունը, եւ անեծքի շարակարգերը հիմնականում առնչվում են հնարավոր վիճակի հետ, որն առաջացնում է պահանջվող դատապարտումը, մինչդեռ վայերը, ըստ էության, գործ ունեն արդեն իսկ գոյություն ունեցող օրինազանցության հետ⁴¹:

Հատկանշական է, որ οὐαὶ-ը չի օգտագործվում դատաստանի շարակարգում՝ Նոր Կտակարանում Ավետարաններից դուրս՝ բացառությամբ Հուդայի նամակի եւ Հայտնության գրքի: Հայտնության գրքում (քսանվեց անգամ) եւ Հուդայի գրքում (մեկ անգամ) դրա գործածության դեպքերը հավասար են Ավետարաններում դրա օգտագործման հաճախականության-

³⁹ Տե՛ս ավելին CLAUS WESTERMANN, Basic Forms of Prophetic Speech, էջ 193–195:

⁴⁰ Տե՛ս HARRIS, R LAIRD., GLEASON L. ARCHER JR., AND BRUCE K. WALTKE, Theological Workbook of the Old Testament volumes 1 and 2, Chicago, Moody Publishers, 1980, էջ 168:

⁴¹ Տե՛ս ավելին CLAUS WESTERMANN, Basic Forms of Prophetic Speech, p. 195, Richard J. Clifford, The Use of HÖY in the Prophets, էջ 459–461, STEVEN HORINE, A Study of the Literary Genre of the Woe Oracle, էջ 92–93:

նը (քսանյոթ անգամ)⁴²: Հատկանշական է նաեւ, որ վայերը հիմնականում օգտագործվում են Իսրայելի հետ կապված Աստծու եւ Իսրայելի հարաբերություններում: Այս դեպքը երեւում է ոչ միայն Ավետարաններում, այլեւ Հայտնութեան գրքում, որտեղ այն չի երեւում մինչեւ ութերորդ գլուխը, երբ Աստված պատրաստվում է վերականգնել Իր հարաբերություններն Իսրայելի հետ: Ինչպէս որ Հին Կտակարանում է, վայերի աճող հաճախականությունը ցույց է տալիս մոտալուտ եւ անդառնալի պատիժը:

Ընդհանուր առմամբ, Նոր Կտակարանում օժի-ի քառասունվեց կիրառումների մեծամասնությունը համատեքստերում է, որը ներառում է դատաստանի մարգարեական հայտարարություն նրանց, ովքեր մերժում կամ ժխտում են Հիսուս Քրիստոսին⁴³: Վայերի ազդակը միավորում է բարկության ու ցավի, զայրույթի ու վշտի գաղափարները⁴⁴: Մինչ Հիսուսը Իր երանիներով (Մատթ. Ե. 3–12) հայտնում է փրկությունը Իր սիրելի աշակերտներին (μακάριοι), ապա Նա դատաստանը հայտնում է կեղծավոր դպիրներին եւ փարիսեցիներին յոթ (Մատթ. ԻԳ. 13–32) վայ պատգամներով (օժի): Որպէս ամբողջություն՝ Մատթեոս ԺԱ. 21 այս վայերն արտահայտում են կանխասաց դատապարտում, որ կանխատեսում են հրեա կրոնական առաջնորդների կործանումը: Օժի բառը դառնում է հրեշտակի ազդարարած երեք կոնկրետ դատաստանների հոմանիշ (Հայտ. Ը. 13, Թ. 12 ԺԱ. 14): Համատես Ավետարաններում վայերի կիրառումը հաստատող բազմաթիվ նշանակալի ապացույցներ կան: Վայերի շարքի օգտագործումը նշանակում է Հիսուսի դատապարտումների դառնությունը: Յոթ թիվը գերազանցում է Հին Կտակարանի եւ Նոր Կտակարանի բոլոր այլ կիրառությունների թիվը⁴⁵: Հետաքրքիր է, որ Հիսուս վայ պատգամն օգտագործում է այն ձեւով, որն ավելի նման է Բ. Օրինաց Իէ. 15–26-ի անեծքների վաղ ձեւին: Հիսուսի կողմից նման ձեւի օգտագործումը հակադրվում է ավելի ազատ ձեւին, որն օգտագործում էին եւ քսորյալ, եւ հետաքսորական մարգարեները՝ բացառությամբ Զաքարիայի ԺԱ. 17:

⁴² Տե՛ս STEVEN HORINE, A Study of the Literary Genre of the Woe Oracle, էջ 94:

⁴³ Բացառությամբ Ա. Կորնթ. Թ. 16-ի, որտեղ Պողոսը խոսում է դատաստանի մասին, որը կստանա, եթե հրաժարվի Ավետարանը քարոզելուց:

⁴⁴ Տե՛ս ավելին FREDERICK DALE BRUNNER, The Christbook, Matthew 1–12 Dallas, Word, volume 1, 1990, էջ 443, ELSEY PHILIP F. Intergroup Conflict and Matthew 23, էջ 1–37, Towards Responsible Historical Interpretation of a Challenging Text. Biblical Theology Bulletin 45, no. 1, 2015, էջ 38–59:

⁴⁵ Եսայի Ե. 8-ը պարունակում է ընդամենը վեցից բաղկացած մի շարք:

Մատթեոս ԻԳ. 13–38-ի շարակարգը ներառում է սուր վշտի տարր, երբ Հիսուս ողբում է Երուսաղեմ քաղաքի համար: Այս հատվաչը, կարծես, զուգահեռ է եւ Ամոսի, եւ Երեմիայի օգտագործմանը, որտեղ վայ պատգամները գտնվում են ողբի հատվածի մոտ (տե՛ս Ամոս Ե.): Հին Կտակարանում եւ Նոր Կտակարանում վայ պատգամների կիրառությունները, թեեւ բազմազան են, այնուամենայնիվ, ունեն ընդհանուր բնութագրեր: Համատես Ավետարաններում Հիսուսի արտասանած վայերը հիմնովին երկու հիմնական գործառույթ են կատարում. Առաջինը՝ որպես մարգարեական հայտարարություն, երկրորդը՝ որպես ողբ:

4. Եզրափակիչ ակնարկներ վայերի մասին

Վայ պատգամների ուսումնասիրությունն իր շարակարգում կարող է մեծ օգուտ բերել Աստվածաշնչի ըմբռնմանը եւ պատշաճ մեկնաբանությունը: Հին եւ Նոր Կտակարանների, Յոթանասնիցի (LXX) եւ Երկրորդ Տաճարի աղանդավորական գրականության ուսումնասիրությունը, որը վերաբերում է վայերին, կարող է տալ տեղեկատվական դասեր: Հին Կտակարանում վայ պատգամների շեշտադրումը հիմնականում համաչափ է երեք բաժինների՝ Իմաստության խոսքեր, թաղման ողբ եւ անեծքի բանաձեւ: Այս երեք հարաբերությունների դիտարկումն էական նշանակություն ունի Հին Կտակարանի հատվածների պատշաճ մեկնաբանություն համար նրա պատմական միջավայրում եւ գրական համապատկերում՝ վերլուծելով դրա կառուցվածքը եւ սկզբնական նպատակային նշանակությունը:

Նոր Կտակարանում վայերի գործածությունները մասամբ համընկնում են Հին Կտակարանի գործածությունների հետ՝ կապված դրա խստության եւ կիրառման հաճախականության, ինչպես նաեւ դրան հաջորդող վայերի հետեւանքների հետ: Վայերը, որոնք հստակորեն արտասանել է Հիսուս համատես Ավետարաններում (հիմնականում Մատթեոսի Ավետարանում), կարելի է դասակարգել երկու հիմնական մասերի. առաջին՝ որպես մարգարեական հայտարարություն, երկրորդ՝ որպես ողբ: Յոթ վայերի մասին հայտարարությունն ակնհայտորեն երեւում է Մատթեոս ԻԳ.-ում, որտեղ Հիսուս դրանք ասում է Իսրայելի հոգեւոր կրոնական առաջնորդներին: Յոթ վայերի մասին Հիսուսի հայտարարությունը հանդիսավորություն է տալիս կյանքի հրավերի համար: Կյանքի հրավերի շեշտադրումը հաղորդում է ապաշխարության եւ փրկագնման (այ-

սինքն՝ փրկության) ուղերձը: Հիսուս խղճահարություն եւ խորը կարեկցանք է հայտնում, ի լրումն սուր վշտի նրանց, ում կիսանգարեն կործանված Երուսաղեմ՝ քաղաքից փախչելու իրենց փորձերի ընթացքին: Հիսուս՝ Ինքը տալիս է խիստ նախազգուշացումներ եւ խոր ողբ մարդկության համար՝ նրանց ապաշխարության ակնկալիքով: Օրինակ՝ Հուդային ուղղված Հիսուսի խոսքերը, էականորեն, խորը վշտի արտահայտություն են, ինչպես նաեւ խիստ նախազգուշացում նրան, որ իր դավաճանությամբ կզրկի իրեն երկնքի արքայություն մտնելուց: Մատթեոս ԻԳ. 37–39-ում ողբը հետեւում է յոթ վայերի հայտարարությանը: Այսպիսով, Հիսուսի ողբը բխում է առնվազն նույնքան վշտից, որքան բարկությունից:

Ὁὐαὶ – վայ, կարող է ունենալ տարբեր նշանակություններ. օրինակ՝ վշտի (Եր. Ժ. 19), ցավի դեպքերում՝ որպես բացականչություն⁴⁶, երկրորդ՝ իբրեւ ափսոսանք, երրորդ՝ տարակուսանք, չորրորդ՝ արտահայտում է սպառնալիք, հինգերորդ՝ զարմանք որեւէ անակնկալ բան լսելիս, վեցերորդ՝ զվարճություն ուրախալի դեպքի առիթով, յոթներորդ՝ ուրախություն որեւէ հաջողության առիթով, ութերորդ՝ կասկած կամ երկյուղ, իններորդ՝ խիստ ցավի դեպքում, տասներորդ՝ շվարած կամ անճարակության դեպքում (Ա. Թագ. Դ. 8), տասնմեկերորդ՝ արհամարհանք որեւէ մեկի պակաս կամ թերի գործի նկատմամբ (Ես. Ա. 4), տասներկուերորդ՝ որպես կարեկցության ու վշտակցության նշան, տասներեքերորդ՝ ցավի ու վշտի աղաղակ (Գ. Թագ. ԺԳ. 30), տասնչորսերորդ՝ չարիքի, աղետի եւ թշվառության արձագանք⁴⁷: Այս արտահայտությունն ունի նաեւ նախազգուշացման իմաստ, թե ինչքան ծանր կարող է լինել արարքի հետեւանքը⁴⁸: Բաղդատելով հայերեն եւ հունարեն հատվածները՝ այստեղ ավելի շատ հակված ենք դիտարկելու օὐαί-ը ձայնարկություն եւ բացականչություն:

Վայ բառը լացի կամ գայրույթի նմանաձայնական բացականչություն է: Այն 69 անգամ հանդիպում է Յոթանասնիցում՝ հաճախ ներկայացնելով եբրայեցերեն «օյ» բառը: Եբրայեցերենում «օյ» նաեւ գործածվում է հաճախ՝ պարզապես ուշադրություն հրավիրելու համար⁴⁹: Նոր Կտակարանում «վայը» գլխավորապես արտահայտում է նախատինք, դա-

⁴⁶ SKE LIDDELL AND SCOTT'S, Greek-English lexicon, Oxford, 1901, էջ 1268:

⁴⁷ Ս. ՄԱԼԽՍԵԱՆՅԱՆ, Հայերեն բացարձակաբանական բառարան, հատոր 4, Երևան, 2010, էջ 293:

⁴⁸ SKE КЛЕОН Л. РОДЖЕРС-младший, КЛЕОН Л. РОДЖЕРС-III, Новый лингвистический и экзегетический ключ к греческому тексту Нового Завета, «Библия для всех» С.-П., 2001, էջ 124:

⁴⁹ Եսայի 55:1, այս համարը թարգմանված չէ Յոթանասնիցում:

տապարտում, թեպետ որոշ դեպքերում կարեկցող վշտի իմաստը նույնպես ակնհայտ է:

Ստորեւ կներկայացնենք սուրբգրային հատվածներ, որտեղ հանդիպում ենք «վայ» բառի կիրառության:

1. Մատթեոսի ԺԱ. 21 եւ Ղուկասի Ժ. 13 համարներում Հիսուս նախատող վայեր է ուղղում Քորազին եւ Բեթսաիդա քաղաքներին, որոնցում ապրող անհավատ ժողովուրդն իր պատգամներին ու հրաշքներին չէր արձագանքում: Հիսուս ասում է, որ եթե Տյուրոսում եւ Սիրոնում կատարվեին այդ հրաշքերը, որոնք այստեղ կատարվեցին, նրանք թերեւս ապաշխարած կլինեին: Մատթեոս ԺԸ. 7 համարում «Վայ՛ աշխարհի ի գայթակղութեանց...» Հիսուս նախազգուշացնում է գայթակղության շարիքի մասին:

2. Մատթեոսի ԻԳ. 13–32 «վայերը», որ Հիսուս ուղղում է օրենքի ուսուցիչներին ու փարիսեցիներին, դատապարտող բնույթի են: Այս առաջնորդների սոփեստությունը⁵⁰ իրապես անհնարին էր դարձնում, որ մարդիկ հավատարիմ մնային իրենց նվիրումին ու արժանանային երկնքի արքայությանը: Կարեկցող վիշտը նույնպես առկա է այստեղ, ինչպես որ Հիսուս պարզորոշ գրասերում է Երուսաղեմի ողբում (Եր. ԻԲ. 20–23):

Հիսուս արտաբերում է չորս «վայեր» Ղուկասի Ավետարանի Զ. 24–26 որպես զգուշացնում նրանց, ովքեր իրեն չեն հետևում, ինչպես նաև՝ որպես իր տխրության արտահայտություն, քանզի Հիսուս գիտեր նրանց անխուսափելի վախճանի մասին: Հիսուսի վայը՝ ուղղված Հուդայի ճակատագրին («Որդի մարդոյ երթայ՛ որպէս գրեալ է վասն նորա. բայց վայ մարդոյն այնմիկ՛ յոյր ձեռս Որդին մարդոյ մատնեսցի. լաւ էր նմա՛ թէ չէր ծնեալ մարդն այն» (Մատթ. ԻԶ. 23)), միավորում է աստվածային ցասումը եւ սաստիկ վիշտը, քանզի Հուդան դուրս է մնում Աստծու ողորմությունից: Հուդա առաքյալի ընդհանրական թղթում («Վայ՛ է նոցա, զի ըստ ճանապարհին Կայենի գնացին, եւ ըստ մոլորութեանն Բաղամայ գեղխեցան՝ զհետ վարձուց, եւ հակառակութանն Կորխայ կորեան») (Հուդա Ա. 11) մարգարեական վայն ուղղված է հերետիկոսական ուսուցիչներին, որոնց կատարած մեղքերը համեմատվում են Կայենի, Բաաղամի ու Կորխի մեղքերի հետ: Վերջիններս նախանձություն, ազահություն եւ հպարտության

⁵⁰ Սոփեստություն, σοφιστής, σόφισμα – հմտություն, խորամանկություն, հորինվածք. հին հունական որոշ մտածողների կառուցած հատուկ կարգի կշռադատություններ, որոնց մեջ առկա է թաքնված տրամաբանական սխալ, եւ առերեւոյթ բխում են կանխահայտորեն կեղծ կամ հակասական մտքեր:

դասական օրինակներ են: Նոր Կտակարանում Կայենի կերպարը ոչ միայն մարդասպանի, այլ նաև եսասիրության, եսակենտրոնության եւ այլ անձանց վրա շար իշխանության տարածման անձնավորումն է: Մատթեոս ավետարանչի ԻԳ. 19 համարում «վայը» գլխավորապես արտահայտում է խղճահարուժյուն եւ կարեկցանք այն մարդկանց հանդեպ, ովքեր իրենց ընտանիքների պատասխանատվության պատճառով խոչընդոտների կհանդիպեն դատապարտված քաղաք Երուսաղեմից փախչելուց:

Պողոս առաքյալի նամակներում հեղինակն առաջարկում է «վայի» հատուկ գործածություն, որի օրինակներից է Ա. Կորնթացիներին ուղղված նամակի Թ. 16 համարը: Այս շարակարգում Պողոս առաքյալն ընդգծում է իր անձնական որոշումը՝ վարձ չվերցնելու եկեղեցուց այնտեղ սպասավորելու ընթացքում: Մյուս կողմից նա շունի ազատություն, նա պիտի Ավետարանը քարոզի: Քրիստոս Ավետարանը քարոզելիս այն հարկադրանքը, որ զգում էր, է՛լ ներքին աստվածային ճնշում էր, է՛լ նրա վրա դրված արտաքին մի բեռ. «վայ նրան, եթե այդպես չաներ»: Իմաստն այն չէ, որ տրված էր նրան, դա կլիներ ամենամեծ դժբախտությունը, որ կարելի է պատկերացնել: Վայի կիրառության հաջորդ օրինակը տեսնում ենք Հովհաննես առաքյալի Հայտնության գրքում, որտեղ «վայի» կիրառությունը հասնում է 14-ի, Լ. 13 համարում Յ անգամ հնչեցված վայը անհավատ աշխարհի այն սաստիկ դատաստանի գալիքն է ահազանգում, երբ հրեշտակները կհնչեցնեն մյուս Յ փողերի ձայները (Հայտ. Թ.-ԺԲ., ԺԱ. 14): Միքայելի ու իր հրեշտակների կողմից սատանայի վտարումից հետո երկնքի բնակիչները կարող են լավ ուրախանալ, բայց մի բարձրաձայն «վայ» հնչում է այստեղ՝ որպես կարեկցող զգուշացում, որ երկնքի ազատությունը նշանակում է կրկնապատկել սատանայի ցասումը երկրի վրա (Հայտ. ԺԲ. 12): Համանուն գրքի ԺԼ. 10 համարում «վայն» արտահայտում է երկրի թագավորների, երկրի վաճառականների, առեւտրական նավավարների փոստանքը երբեմնի հզոր առեւտրական, բայց շահամոլ ու մեղսասեր քաղաքի՝ Բաբելոնի կործանման համար, քանզի նրանք գիտեն, որ նրանց եկամտի աղբյուրն ու միջոցներն ամբողջապես կորան⁵¹: «Վայ» բառը հանդիպում է իբրև դատապարտություն⁵² Մատ-

⁵¹ Տե՛ս VERBRUGGEE VERLYN D., The NIV Theological dictionary of New Testament words, USA, 2000, էջ 938:

⁵² Տե՛ս G. ABBOTT-SMITH, D.D., D. C. L. T & T CLARKE, Abbott-Smith Manual Greek Lexicon of the New Testament., London, 1922, էջ 327:

Թեոսի ավետարանի ԻԳ. 14 համարում նորկտակարանյան դրվագներում. «Բայց վայձեզ մեծատանցդ. զի ընկալայք զմխիթարութիւն ձեր: Վայձեզ որ յագեալդ էք այժմ, զի քաղցիցէք. վայձեզ որ ծիծաղիքդ այժմ, զի սգայցէք եւ լայցէք»: (Ղուկ. Զ. 24–26)⁵³ կամ էլ վշտի դեպքում որպես առաջնային բացանակչություն⁵⁴:

Հաջորդ բառերը, որ պետք է անդրադառնանք, «դպիր» եւ «փարիսեցի» բառերն են, որոնք մեծ տարածում ունեն նորկտակարանյան շարակարգում եւ հատկապես ուսումնասիրվող աշխատությունում առանցքային հարցադրմանն են պատասխանում, թե ինչո՞ւ Քրիստոս հենց փարիսեցիներն ու դպիրներին էր դատապարտում:

ՀԻՄՆԱԲԱՌԵՐ

Աստվածաշունչ, աստվածաշնչագիտություն, դպիր, փարիսեցի, վայ:

РЕЗЮМЕ

В статье представлен всесторонний экзегетический анализ «возгласов горя» в Евангелии от Матфея 23:13–32. Исследование рассматривает происхождение и семантический диапазон термина «горе» (οὐαί) в Ветхом Завете, Септуагинте, литературе периода Второго храма и Новом Завете. Особое внимание уделяется пророческой и плачевой функциям формулы «горе», которая одновременно выражает осуждение и сострадательную скорбь. Через анализ еврейского и греческого употребления, а также их историко-культурного контекста, подчеркивается богословское значение матфеевских «горе», выступающих и как пророческий суд, и как настойчивый призыв к покаянию. Работа вносит вклад в более глубокое понимание библейской риторики и структуры пророческой речи.

⁵³ Տե՛ս նաեւ Մարկոս ԺԴ. 21, Մատթեոս ԺԱ 11...:

⁵⁴ Տե՛ս JAMES STRONG, Greek Dictionary of the New Testament, Albany or USA versoin, 1997, էջ 315:

SUMMARY

This article provides a comprehensive exegetical analysis of the “woe sayings” in Matthew 23:13–32, exploring their linguistic, theological, and historical dimensions. The study traces the origin and semantic range of the term “woe” (ὠδῶν) in the Old Testament, Septuagint, Second Temple literature, and the New Testament. Special attention is given to the prophetic and lamentational functions of the “woe” formula, demonstrating its dual role as both condemnation and compassionate grief. By examining the interplay between Hebrew and Greek usage, as well as the broader cultural and literary contexts, the article highlights the theological significance of the Matthean woes, emphasizing their function as both prophetic judgment and an urgent call to repentance. The analysis contributes to a deeper understanding of biblical rhetoric and the interpretive framework of prophetic speech.

